

## Սերգեյ Աղաջանյան, Միջօրե, եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, 304 էջ\*:

Բանալի բառեր–արձակ, ժողովածու, պատում, գեղարվեստական տեքստ, մաքառող անհատ, անհատականություն, իմաստասիրական հայացք, հոգեբանություն, հերոս:

Արձակը գեղարվեստի ինքնադրսևորման ձևերից մեկն է, որ ստեղծագործ անհատի մեջ բացվում է յուրովի: Մերօրյա արձակի համապատկերում ինքնատիպ անունների պակաս չի զգացվում, ուստի նույնքան կարևոր է նրանց ստեղծագործական որոնումների արժևորման խնդիրը: Այս գիտակցությունն է մեզ մղել ընթերցողի քննական հայացքով դիտարկելու Սերգեյ Աղաջանյանի «Միջօրե» ժողովածուն:

«Միջօրե» գրողի արձակ ստեղծագործությունների ամփոփումն է մեկ գրքում: Նրանում գետեղված պատմվածքների ու վիպակների կառուցվածքային նախընտրությունը կատարվել է ժամանակագրական սկզբունքով. առաջին մասը վերնագրված է՝ «Սկիզբը» (1987 թ.), երկրորդ մասը՝ «Եվ հետո» (1994–2015 թթ.): «Միջօրե»՝ իբրև գրքի վերնագիր, ինքնատիպ մտահղացման արդյունք է: Այն մի դեպքում յուրահատուկ կամուրջ է «Սկիզբ»-ի ու «Եվ հետո»-ի միջև, քանի որ «հետո»-ն կարող է նաև հետմիջօրեն լինել: Բայց առավել ուշագրավ է «Եվ հետո»-ն միջօրեի համատեքստում՝ իբրև ստեղծագործական հասուն տարերքի արտահայտություն, որ խոստանում է բացել կեցության իմաստի ինքնատիպ ըմբռումներ գեղարվեստական տեքստում: Թերևս ճիշտ կլինի այս հարթության մեջ դիտարկել վերնագրի ու տեքստի փոխառնչությունների հիմնական առանձնահատկությունները: Նաև՝ ակնկալել հետմիջօրեին գրվելիք նոր ստեղծագործություններ:

Վերնագրի՝ իբրև բանալի բառի, հպանցիկ մեկնաբանությունը հուշում է Սերգեյ Աղաջանյան արձակագրի ստեղծագործական նախասիրության առանցքային կողմը, ինչը նա, որպես բնաբան, զետեղել է ժողովածուն եզրափակող վիպակում. «Նրանց, ում համար **մտածելը** կենսակերպ է»<sup>1</sup> (ընդգծումը մերն է – Դ. Պ. ):

Ժողովածուում ներառված գործերում էական դեր ունի մտածելու, լայն իմաստով՝ **մտածողության գեղարվեստականացումը**, որը իմաստասիրական ներքին ենթատեքստերի շաղախն է: Այն հնարավորություն է տալիս պահպանելու գրական երկին բնորոշ պատկերային համակարգի սահման-

Վ.Կ.Վ. համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) փայրի, թիվ 3 (63), հավիս-սեպտեմբեր, 2018

\*Ընդունվել է տպագրության 28.08.2018:

1 Աղաջանյան Ս., Միջօրե, եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 202:

ները, նաև գեղարվեստական տեքստի խաղացկուն կառույցը: Այս համատեքստում՝ ուշագրավ մի դիտարկում. գրքի հատկապես երկրորդ բաժնի ստեղծագործությունների զգալի մասը սկսվում է բնանկարի և ընդհանրապես բնության այս կամ այն երևույթի **հոգեբանականացման** գեղարվեստական դրվագներով: Հեղինակի դիտողականությունը մի պահ կանգ է առնում նյութի արտաքին ու ներքին, առաջին հայացքից աննկատելի կողմերի վրա, նուրբ անցումներով խոսեցնում այդ դրվագները: Իրողություն, որ անմիջական աղերսներ ունի հայ դասական արձակի (Ա. Բակունց, Գ. Մահարի, Համաստեղ և այլք) գեղագիտական տեսողության հետ. «Տերևաթափի ծույլ թախիծը մանող այգու խաղաղությանը միայն ժայռերի հենակներն էին խանգարում: [...] Իրենք էլ զգում էին իրենց ավելորդ լինելը: Այնինչ նրանց ժունգերում դեռ գարնան բույրեր կային»<sup>2</sup>: («Հեքիաթի վերջը»): «Միսած քաղաքը կծկվեց ինքն իր մեջ: [...] Լուսամուտներից ծխամորձի պես դուրս ցցված ծխնելույզ-խողովակների թույլ շնչառությունը վաղուց մարել էր» («Լուսնահաչ»): «Շրջակա անձիք անապատի պապակ թոքերը հաճույքով կլանում էին ոչ այնքան հեռվում ինքն իր քմահաճույքին ծավալված ծովի խոնավ շունչը»<sup>4</sup>: («Ես Հուդան եմ»):

Մատուցման այս ձևը, որ Ս. Աղաջանյանի գեղարվեստական պատումի հատկանշական կողմերից մեկն է, թվացյալ հանդարտության խորքում կանխորոշում է գործողության հետագա դրամատիկ ընթացքը:

Պատմվածքներում և վիպակներում տարբեր սցենարներով խաղարկվող դրամատիկզմը առաջին հերթին բացվում է հերոսների հոգեբանության մեջ: Նրանք հիմնականում **մաքառող անհատներ են**, կյանքի դժվարություններին չհամակերպվող, դրանք հաղթահարելուն միտված ազնիվ մարդիկ: Մարդկային այս տեսակը բարոյական իր դրսևորումներում միագիծ չէ, ինչն անհրաժեշտ է գրողին՝ բարոյախոսության «թակարդը չընկնելու» համար: Մաքառումն ինքնին կարևոր է, բայց միշտ չէ, որ կարող է հանգեցնել հոգու ներքին խաղաղության: Մանավանդ՝ եթե այդ մաքառումը ոչ միայն արտաքին (ի դեմս միջավայրի), այլև ներքին (հոգու) պատնեշների դեմ է: Այս առումով իսկապես հաջողված կերպար է «Լուսնահաչ» պատմվածքի գլխավոր հերոսը: Նրա կյանքի փոքրիկ մի հատվածի պատկերումը տխուր առօրյայի, կենցաղի և համոզմունքների հենքի վրա առավել համոզիչ է դառնում, երբ գրողը պատմվածք է ներբերում մեկ այլ հերոսի՝ աստվածաշնչյան Հոբին՝ ստեղծելով երկու զուգահեռ հարթություններ:

Երկուսին էլ տրված է մաքառումի ճանապարհը: Մեկնարկը նույնն է. պետք է տառապեն: Ժամանակն ու ընկերային միջավայրերն են տարբեր: Բայց կա երկու հարթությունները միավորող մի կետ՝ հոգին, որից բխող հոգեբանական գործոնները չեն փոխվում և մշտապես ուղեկցում են մարդուն: Դրանցից մեկը **հավատն է**. վերջինիս ներկայություն/բացակայությունը վճռորոշ է դառնում մաքառող այս կերպարների ճակատագրում. «Երեխաներն ու կինը արդեն քնել էին: Իր քունը դեռ չէր տանում: Տաքանալուց հետո ձեռքերի ու ոտքերի մեջ ինչ-որ բույթ ցավ էր նվում: Ուշ գիշեր

2 Աղաջանյան Ս., Միջօրե, էջ 80-81:

3 Նույն տեղում, էջ 90:

4 Նույն տեղում, էջ 114:

էր. տունն սկսել էր ցրտել: Մամվելի սրտում էլ ցուրտ էր ու խավար...»<sup>5</sup> («Հավատի բացակայություն»):

Հեղինակը պատմվածքն ավարտում է Հոբի դրվագով՝ անուղակիորեն հուշելով մաքառող անհատի մեջ հավատին ու անհատականությանը նախապատվություն տալու սեփական դիրքորոշումը: Հոբի մեջ հավատն անսահման է: Նա «մեռավ ծերացած ու ապրելուց կուշտ: [...] Նրա հոգին երբեք չպղտորվեց իր կորուստների ու տառապանքի վերհուշով և այն մտքից, թե ինքն ունե՞ր արդյոք նորագյուտ այդ երջանկության կարիքը, իր կորցրածն էր շատ, թե՞ գտածը...»<sup>6</sup>:

Եվ եղավ երջանիկ...»<sup>6</sup>:

Վերջին խոսքը, այնուհանդերձ, **մտածող ընթերցողինն է**:

Ժողովածուում հոգևոր մաքառումներով ձևավորված **անհատականության** լավագույն ներկայացուցիչներից մեկը «Ես Հուդան եմ» վիպակի գլխավոր հերոսն է: Ինչ խոսք, դյուրին չէ անդրադառնալ մի կերպարի, որի շուրջ հյուսված բազում պատմություններն ու տեսակետները, թվում է, գրողին հեռու չէին կարող պահել տրորված ճանապարհից: Ուստի խրախուսելի է Սերգեյ Աղաջանյանի համարձակությունը:

Եվ ոչ միայն:

Ինչպես այս, այնպես էլ իր մի շարք այլ ստեղծագործություններում հեղինակը պատումը կառուցում է ժամանակային փոքր տարածքի մեջ՝ սևեղվելով առավելապես հերոսների ներաշխարհի վրա: Ըստ այդմ առաջին պլան է մղվում **հոգեբանական կողմը**: «Ես Հուդան եմ» վիպակում Քրիստոսի խաչելության և նրան հաջորդող օրերի իրադարձությունների հենքի վրա հյուսվում է գլխավոր հերոսի հոգեկան ապրումների ուշագրավ մի պատկեր, որի սահմաններում մարդկայնորեն տառապող Հուդան բարձրացնում է նաև սեփական համոզմունքների խնդիրը: Այլ խոսքով՝ մեղքի գիտակցմանը զուգահեռ, անհատը իր եսը բացահայտելու, ինքնաճանաչողության նոր որակ ձևավորելու որոնումների մեջ է: Առավելապես այս մակարդակում է կերպավորվում անհատականությունը, որ մղում է Հուդային վիպակի վերջում ընդվզելու ճակատագրական կանխորոշվածության դեմ:

Ճակատագրին դեմ գնալու գեղագիտական խնդիրը համաշխարհային գրականության մեջ արծարծվել է դեռևս անտիկ շրջանի դրամատուրգների ստեղծագործություններում: Մոֆոկլեսի «Անտիգոնե» ողբերգության մեջ հերոսուհին դուրս է գալիս աստվածային օրենքների դեմ՝ սեփական անհատականությամբ նոր մոտեցում ի հայտ բերելով. Ճակատագիրը ոչ թե մարդուց դուրս է, այլ նրա մեջ<sup>7</sup>:

Վիպակի վերջնամասը Հուդայի՝ որպես անհատականության կայացման և սեփական գոյության դատարկությունն զգալու ողբերգական պատկեր է, որ գեղարվեստորեն մարմնավորված է նրա և Հիսուսի գրույցում.

«Թե դու աստված ես կամ աստծո որդի, աղաչում եմ քեզ, վերադարձրու ինձ իմ մեղքը, ասա, որ ես իմ կամքն եմ կայացրել, կյանքն եմ ապրել՝ թեկուզ մեղսաշաղախ...»

5 Աղաջանյան Ս., Միջօրե, էջ 113:

6 Նույն տեղում:

7 Տե՛ս Մոֆոկլես, Անտիգոնե, «Հին հունական ողբերգություններ», Եր., Երևանի համալս. հրատ., 1990, էջ 191-241:

-Ո՛չ, Հուդան,-վերից խոսեց Հիսուսը,- դու Աստծո խոսքը չէ, որ խոսում ես. ողջը եղել է, ինչպես վճռված էր...»<sup>8</sup>

Մատնության մեղքի վերապրումից ավելի ծանր է գոյության ոչնչությունը գիտակցելը: Հեղինակի մտտեցմամբ՝ այս համոզմունքն է հերոսին մղում ինքնադատաստանի: Սա հանգուցալուծման ինքնատիպ տարբերակ է, քանի որ մղում է ընթերցողին՝ վիպակից դուրս շարունակելու մտորումները գոյության անհիմանալի ու անմեկնելի խորհուրդների շուրջ:

Այս համատեքստում առանձնակի հետաքրքրությամբ են ընթերցվում նաև «Պարականոն գրույցները»: Ընդհանրապես Աստծո և աստվածաշնչյան թեմաների խորհմացությունը, միահյուսվելով գրողի իմաստասիրական ըմբռնումներին, ժողովածուում ստեղծել է գեղագիտական համադրության մի որակ, որ մեծ մասամբ ինքնատիպ լուծումների է հանգեցրել: Նույնն է նաև այս դեպքում: Նախ՝ վերնագրի թեմատիկ ու կառուցվածքային մտահղացման մասին: Մի կողմից՝ «պարականոն» բառի (չկանոնակարգված, որևէ կանոնի չենթարկվող) ենթատեքստերը ստեղծագործ ճախրանքի թևեր են պարզևել, որոնց շնորհիվ գրողի երևակայությունն ու ներքին ազատությունը մտել են իրենց տարերքի մեջ: Մյուս կողմից՝ երկի կառույցը կանոնակարգվել է երաժշտական ստեղծագործության ժանրային տարատեսակներով (սոնատ, կապրիչչո, ադաջիո, ապոթեոզ, էլեգիա, ռեքվիեմ), որոնք մտքի, բառի և հնչյունի ներդաշնակության պատրանք են ստեղծում: Արտաքնապես հակադիր, իսկ խորքում միասնաբար գործող այս թեթևոտն, բայց խորիմաստ գրույցների շարժիչը գրողի **վիպական պատումի շունչն է**, որը հնարավորություն է տվել նրան, ի դեմս երկփեղկ կառույցի, լինելու **Ա արարիչ, Ա դպիր**: Երբ արարիչն է առաջին պլանում, հաճելի զարմանքով հետևում ես հեղինակի երևակայության անսպառ խաղերին: Երբ ակնառուն դպիրն է, ապա գրույթի տարածքում թրթռում է շարադրանքի երաժշտական ռիթմը. «Շատ ցանկացավ, որ թողություն լինի...

Եվ արարչական այդ անկասելի զղջումից ու ցանկությունից մաքուր, տաք ու փափուկ ձյուն տեղաց Երկրի վրա: Լույսի պես սուրբ ու մաքուր ձյուն:

Եվ Մարդու համար եղավ մի վերջին՝ ձյունագոծ թողություն...»<sup>9</sup> (պատկեր «Ռեքվիեմ» հատվածից):

Ինչպես նախորդ մի շարք գործերում, «Պարականոն գրույցներ»-ում ևս ի հայտ է եկել գրողի իմաստասիրական հայացքի **բազմադիմությունը**, որ, ինչպես ինքն է գրում «գրույցների» նախաբանում, պայմանավորված է ոչ այնքան «Անհիմանալին մատչելի դարձնելու» ձգտումով, որքան նրա «արարչական հրաշքի» **գիտակցումով**<sup>10</sup>: Խոստովանություն, որ ինքնաբնութագրումի արժեք ունի:

Սերգեյ Աղաջանյանի «Միջօրե» ժողովածուի որոշ ստեղծագործություններ պատումի խորքային շերտերի և դրանց մատուցման առումով նշված մակարդակը չունեն: Խոսքս վերաբերում է մասնավորապես առաջին մասի («Սկիզբ») պատմվածքներին, որոնցում իրադարձության, պահի պատմո-

8 Աղաջանյան Ա., Միջօրե, էջ 173:

9 Նույն տեղում, էջ 199:

10 Տես նույն տեղում, էջ 176:

ղական-նկարագրական անդրադարձը երբեմն երկրորդ պլան է մղում հերոսների հոգեբանության գեղարվեստական պատկերավորումը: «Իր բախտը փնտրող տղայի հեքիաթը» վիպակում թեև ասելիքի ուշագրավ շեշտադրումներ կան, սակայն ամբողջության մեջ, կարծում ենք, գեղարվեստական ռիթմը դանդաղում է ավելի, քան պետք է, ինչի արդյունքում պակասում է ներքին դինամիզմը:

Սրանք, իհարկե, չեն խաթարում այն լուրջ գեղագիտական համակարգը, որ դրված է ժողովածուի լավագույն ստեղծագործությունների հիմքում և մտահղացման ու կատարումի ինքնատիպ որակներ է հաղորդել դրանց: Սերգեյ Աղաջանյան արձակագիրը անաղմուկ, առանց գովազդների սեփական ճանապարհին է հարթում ժամանակակից հայ արձակում:

Դավիթ Վ. Պետրոսյան  
*Բանաս. գիտ. դոկտոր*

**Դավիթ Վ. Պետրոսյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է 20-րդ դարասկզբի հայ գրականության և մամուլի պատմության հիմնախնդիրները («Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում», Եր., 2007), հեղինակել է ժուռնալիստիկայի, գրականության և մշակութաբանության փոխառնչություններին, նրանց զարգացման արդի միտումներին նվիրված ուսումնասիրություններ («Պատում, մեղիատեքստ, հակառակ հեռանկար», Եր., 2017, «Причуды инверсии: текст и обратная перспектива», Saarbrücken, 2017) և հոդվածներ:

## Summary

**Sergey Aghajanyan, Midday, Yer., RA NAS «Science» press, 2016, 304 pages.**

Davit V. Petrosyan

**Key words** – prose, collection, literary text, struggling individual, philosophical glance, psychology, hero.

The review analyzes and evaluates the literary peculiarities of the stories and novelettes enclosed in the collection “Midday” by Sergey Aghajanyan.

It states the significance of artistic mentality perceived in aesthetic structures of the prose-writer. The latter creates distinctive works in prose through comparison of visualization system of material presentation.

The heroes of Aghajanyan are mostly struggling individuals: at the fatal moments of life they sometimes lose and sometimes reaffirm their individualism. The author presents all these by giving an important place to the nuances that are opened in their inner world.

**Сергей Агаджанян. Полдень. Ереван: Изд-во НАН РА  
«Гитутюн», 2016. – 304 с.**

Давид В. Петросян

**Ключевые слова** – проза, сборник, повествование, художественный текст, борющийся индивид, индивидуальность, философский взгляд, психология, герой.

В рецензии анализируются и получают оценку художественные особенности рассказов и повестей, помещенных в сборник Сергея Агаджаняна «Полдень». Отмечается, что в эстетическом построении прозаика играет существенную роль охудожествление мышления, которое в синтезе с образной системой преподнесения материала создает своеобразные прозаические произведения.

Герои Агаджаняна – в основном борющиеся индивиды; в роковые моменты жизни они иногда теряют, а иногда вновь подтверждают свою индивидуальность. Все это автор представляет, отводя важное место психологическим оттенкам, раскрывающимся в их внутреннем мире.

#### REFERENCES

1. **Aghajanyan S.**, Mijore, Yer., HH GAA «Gitutyun» hrat., 2016.
2. **Sophokles**, Antigone // Hin hunakan voxbergutyunner, Yer., «Yerevani hamals. hrat.», 1990.